

Բայ ի այս հանրածանօթ անուններէն, կային նաեւ Քէլփիմն ու Ձաղ-
լաղանք:

Տէվէլի Տաղի լանջին վրայ մինչեւ 1896 գոյութիւն ունին եղեր
այգիներ:

Մեր օրերուն դեռ կը մնային անոնց գօսացած արմատներն ու
ճէհրիի ծառերը:

Գրեթէ ցամքած էր աղբիւրը, բայց տարրեր է եղեր կեանքը հին
օրերուն:

Եղանակին ամէն բնտանիք մեղուաջան աշխատանքով կը հաւաքէ
եղեր ոսկեծառի պտուղը մասնաւոր արարողութիւններով ու խորա-
ճանքով: Ծէհրին շատ մը ընտանիքներու ապրուստի միջոցն է եղած:
Ձորէն վեր՝ Տէրիմ Տէրէ գրեթէ ամբողջութեամբ ձէհրիի է եղած:
Կոտորածէն վերջ այդ այգիները բոլորովին լքուած էին:

Իր դիրքին ու բնական պայմաններու համաձայն կը տարրերէր
այգիներու խաղողի համն ու տեսքը: Զրազուրկ այգիներու (Գլրած)
պտուղը աւելի մանր բայց անուշ կ'ըլլար:

Բնական դիրքին պատճառով որոշ շրջաններու խաղողը աւելի
չուտ կը հասնէր:

Առաջին անգամ հատիկ հատիկ կարմրիլ կը սկսէր (Ալաճա կ'իյ-
նար (*)) չամչնոցին մէջ:

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Պ Ի Ն Ե Ր Ո Ւ Մ Է Ձ

Ժողովուրդի մասնաւոր ուշադրութեանը առարկայ էին այգինե-
րը: Անխնամ այգին չուտով կը քորնար: Աշան վերջերը աղբ կը
թափուէր ու կը գոցուէին որթերու արմատները:

Իսկապէս օրհնեալ տունի մըն էր խաղողի թուփը: Ծղակտոր ու
խեղճուկ բուն մը, դարնան կը բորբոջէր ու նոր ճիւղեր կ'արձակէր:

Տերեւներուն հետ դուրս կուգար նաեւ խաղողը որու ծաղիկները
չուտով կը բացուէին կ'արգասաւորէին ու թրթուրի նման կը փայ-
լէին տերեւներու մէջէն:

Գարնանային աշխատանքի մաս կը կազմէր այգիներու բահումը,

(*) Ժողովրդական բացատրութեամբ կ'ըսուէր նաեւ Պէնկ կ'իյ-
նար:

Այսպիսի իրողութիւններ չէին վրիպեր թաղի տղոց ուշադրու-
թենէն: